

տագնելը Եզրիպտոսէն կու գար վաթսուներէ չափ նկարներով: Ձիները իտալիա առաջ- նորդորը թերևս ուխտ մը, երազ մը ի- րագործելու տենչը եղած ըլլայ, կամ աւելի բարձրերը ճախրելու ճշմարիտ ա- րուեստագէտի անհանդարտ հոգին, որմէ խոշտանգուած անապատներ կտրած է անիկա. բաց ի Սէ ծովու ափունքներէն՝ պտտելով Սուրիա, Պաղեստին, Եզրիպտոս, որոնք տուած, մերկացած են իրենց այ- լացեղ տիպարներուն՝ սովորութիւն ու լոյսի և երանգի անջրպետներուն զանձը, բորբոքուն կեանքի մը խռովիչ առասպելը:

Յիսուս հատի չափ կան բասթելով շինուած դիմանկարները, անոնցմէ ամէն մէկուն արտայայտութիւնը յատուկ ինքն- ուրոյն բան մ'ունի տարագի մը մէջ կեցուածքով մը. ժպիտի ու նայուածքի արտայայտութեամբ մը առջևդ կը դնէ տիպար մը. ու կը զարմանաս թէ ինչ- պէս ան կրնայ քանի մը գծերով երևան բերել դէմք մը, և արտայայտութիւն ու կեանք տալ անոր:

Սմէն նկար ներշնչում մըն է, կամ արդիւնք ներշնչման մը, քաղուած հոգե- բանական այն բնորոշ վայրկենին՝ ուր անհատի մը հար զօրեղապէս կը շեշտուի:

Կարելի է արուեստի (թէքնիք) նըրու- թեան տեսակէտով լաւի և լաւագոյնի ընտրութիւն մ'ընել, նոյնը հարկ է կա- տարել արտայայտութեան տեսակէտով, գիտնալու համար թէ որոնք են այն դի- մանկարները՝ որոնց մէջ թափանցելու, ներքինը ուժեղ կերպով արտայայտելու ամենարարժըր աստիճանին հասած է ա- րուեստագէտը:

«Ռահմայ» յն, «Հապէշ քահանայ» յն, «Հայ տէրտէր» ըր, Հրեայ տիպար» ըր, և «Հալաշ» ըր բառին զուտ և ամենալայն իմաստով տիպարներ են:

Բասթելով գծուածներէն զատ՝ վեց հատ իրզաներկ նկարներ կան. ամենէն ալ բը- նութեան տեսարաններ են. հմայիչ շեշ- տը կը բերեն արևելեան շրջապատին: Անոնց մէջ «Մոդոմոնի տաճարին պարբա- պին առջև հեծող հրեաներ» ու նկարը՝

յոյժ խորհրդաւոր, հոյակապ դրուագ մ'է հոգեկան անձկութեան, պատմութեան և շրջապատին իրականութեամբ բարախուն:

Պասլ-Պէքի «Ատոկան տաճարը» ըը- նարական ցայտը մըն է, վրձինով կեր- տուած, որ կապոյտ հորիզոնին խորու- թեան մէջ իր թափթիղ կմախքը եր- կընքին կարկառած կեանքի և սիրոյ օրհ- ներգութիւնը կը պատմէ: «Ս. Յակոբի ներքնակողմը» Երուսաղէմի հայ եկեղեց- ւոյն, աղօթամբմունք առանձնութեան մը զգայնութեամբ կը թրթոյ. դեռ ուրիշ- ներ՝ որոնց մասին հոս երկար պիտի ըլ- լայ խօսի՝ կը շեշտեն հայ արուեստա- գէտին ինքնատիպ տաղանդը:

Պ. Մուրատեան դեռ երիտասարդ՝ աշ- խատելու անվկանդ կամքով մը օժտուած՝ կատարելագործուելու ճամբուն մէջ է. ան պիտի յառաջադիմէ, բաց է ասպարէզը իր բուռն խոյանքին:

Մեր կողմէն բիւր յաջողութիւններ:

ԹԼԹԱԿԻՑ

ՆԱԶԱՐԵԹԱՅ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅՈՑ

Ու է ԿԵԼԵՄ ԼՆԵՐԵՅ

◁ ◻ ▷

Եկեղեցիս այս կառուցաւ յամին 1724 յԱղայ Նազարայ Նոր - Զուղայեցոյն ի վերայ նախկին գերեզմանատան Հա- յոց, զի ցայսօր գտանին անդ շիրիմը ննջեցելոց՝ որոց տաճարագիրք ունին թուականս՝ բազմօր յառաջ քան զշինու- թիւն սրբոյ տանն: Ի սրահի սրբոյ եկե- ղեցւոյս որ է ընդարձակ յոյժ, գտանի հնագոյն գերեզմանն ի Կալկաթա, ունելով տապանագիր մի հակիրճ, օրինակ զայս:

«ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՈՂՈՐՄԱՆՆՈՒԻ
ՍՈՒՐԲԱՅ ԿՈՂԱԿԻՑ ՌԸԶԱ -
ԲԻԲԷ ՈՐ ՓՈԽԵՑԱՒ ԱՇԽԶԱՐԷՍ
Ի ԿԵԱՆՍ ԶԱՒԻՏԵՆԻՑ» ԹԻՎՆ 15
ՆԱՌԱ 21.

Արդ թուական տապանագրիս է ըստ փորը՝ կամ Ազարիայի տունարին, որ սկսաւ ի Նոր-Ջուղա յամին 1615, ուստի Հայուհին Ռեզարիթէ հանգեալ է յամի Տհառն 1630, կամ 60 ամօք յառաջ քան զգալուստ Անգլիացւոց աստ ի կալկաթա, ուստի կարեն իրաւամբ պարծել Հայք՝ թէ ինքեանք լեալ են Հիմնադիրք մայրաքաղաքիս մեծի որ այսօր երկրորդ մեծագոյն է մեծահարուստ քաղաք զոչ համարի ի պետութեան Անգլիական ազգին:

Ճարտարապետ եկեղեցւոյն էր Նոր-Ջուղայեցի ոմն Ղևոնդ անուն և կառուցեալ է այն ի վերայ վեց վիթխարի սեանց:

Չանգատունն կառուցաւ յամին 1734 ծախիւք պայազատ տունին Հազարմալեանց, և մեծագին ժամացոյցն որ ի վերայ աշտարակի զանգատանն՝ նուիրեցաւ յամին 1795 յԱղայ թաշկայ Առաքելեան որ ի Զնթլումեանց տղնիւ տունէն:

Բնակութիւն վիճակաւոր քահանայից որք զան աստ ի Նոր-Ջուղայէ՝ կառուցաւ նոյնպէս ծախիւք Աղայ թաշկայ Առաքելեան յամին 1790, այլ ըստ որում երկյարկանի էր այն յառաջ և ոչ բաւական վասն երից քահանայից, ժամկոչի և տիրացոյի, ուստի յամին 1906 յաւելաւ յայն և այլ իմն յարկ արդեամբք և ծախիւք ի Տէր հանգուցեալ Պարոն Յարուսթիւնի Գրիգոր Արզարեանց:

Ունի եկեղեցին զբամազուլու մեծագու. մար ի շարժական և յանշարժ կալուածս կտակեալ ի բարի յիշատակ նախնեաց բարեպաշտոց, որով եկամուտ եկեղեցւոյն հասանէ ցտանն հազար ուսփիս կամ իրր եօթն հարիւր անգլիական ոսկիս առ ա. միսն որ գնայ վասն ընթացիկ ծախուց սրբոյ տանն, յապրուստ ազգային աղքատաց և պանդխտից և յուսումն աղքատ որր և տարագիր աշակերտաց ի Հայկեան Մարդասիրական Ճեմարանին՝ որ ի քաղաքի աստ:

Յայամիկ եկեղեցւոյ տեսանին ինկելի շիրիմք և տապանք հետագայ հոյակապ Հնդկահայոց՝ որք թողին անուն և յիշա.

տակ բարի յիւրկի աստ ջերմ ազգասիրութեամբ, կրօնասիրութեամբ և մեծագործութեամբ իւրեանց:



Կալկաթայի Ս. Նազարեթայ Նկեղեցի

1. Աղայ Նազար որ զեկեղեցին կառոյց յամին 1724՝ ի պահպանութիւն սուրբ կրօնի մերոյ:

2. Աղայ Հազարմալ որ զզանգատունն կառոյց յամին 1734 ի պայծառութիւն եկեղեցւոյ:

3. Աղայ Պետրոս Յարութիւն որ շրջապատեաց զսրահ եկեղեցւոյն բարձր որմովք, և բազում իւրեք եղև պատճառ բաւեղաբարեութեան սրբոյ տանն յամին 1763:

4. Աղայ թաշկայ Առաքել որ կառոյց զբնակութիւն վիճակաւոր քահանայից յամին 1790, և նուիրեաց զհոյակապ ժամացոյցն մեծագին որ ի վերայ Հազարմալեան զանգատանն յամին 1795:

5. Պարոնայք Յարութիւն և Գրիգոր Արզարեանք, հիմնադիրք մեծահոգակ «Ար-

գար և ընկերութեան» վաճառատանն քաղաքին յամին 1829՝ որք և յամին 1843 բացին անդ ի ծննդավայրն իւրեանց ի Նոր-Ջուղա զ«Հայկեան Հայրենասիրական Ուսումնարանն», որ յետոյ միացաւ ընդ «Կեդրոնական Ազգային Դպրոցին», որ անդ համահաճ հաւանութեամբ տանն Արգաւանն» որ աստ ի Կալկաթայ:

6. Պարոն Յարութիւն Գրիգոր Արգաւանն որ զերկարկանի բնակութիւն քահանայից արար եռայարկ յամին 1906, և որ թողեալ է հրիտակս կարևորս յանուն կրթական և բարեգործական ազգային հաստատութեանց ի Նոր-Ջուղա:

7. Մասեհ Բարաջան՝ կամ Արդմանհ Մարտիրոսեան Համադանցին՝ որոյ մեծագումար հրիտակօք կատուցան դպրոցք ի Նոր-Նախիջևան Ռուսիոյ:

8. Պարոն Աստուածատուր Մուրադխան, որ եղև հիմնադիր «Հայկեան Մարդասիրական Ճեմարանին» ի քաղաքի աստ յամին 1821:

9. Պարոնայք Յարութիւն Գալուցեան Էդոնիկացին և Յովհաննէս Ալզալ Շիրազեցին՝ որք եղեն առաջին և երկրորդ վարժապետք Հայ ոսկեղինիկ դպրութեան ի Մարդասիրական Ճեմարանին ի 1821 ամէն յամն 1863:

10. Պարոն Յովսէփ Էմին՝ որ զամս բազումս շրջեցաւ ի Հայաստան և ի Պարսկաստան, և բազում տանջանս կրեաց ի ծնոս ի ձեռս բերելոյ զբաղձալին ազատագրութիւն բազմատանջ ազգին ի ձեռաց անողորմ Պարսից ի վերջ կոյս 18րդ դարուն:

11. Պարոն Թադէոս Խաչիկ Ավետուսեան, Հայկարան և մտերիմ բարեկամ և սքանչացող անմահ ճերթողին Մեսրոպեայ Թադեոսեանի և մի ի հիմնադրացն «Արաշտական ընկերութեան» Կալկաթայի՝ որ

հրատարակեաց զլրագիրն «Աղբուր» ընդ կարող խմբագրութեամբ Թադեոսեանի ի 1845 ամէն ցամա 1852:

12. Աղայ Յովնան Լիւնգեան որոյ իշխանական տուրք առ եկեղեցին մեր և ճեմարան ի քաղաքիս՝ ոսկի դրուագաց են արժանի:

13. Տէր Յովհաննէս Խաչակիր Աագ Բահանայն Խաչկեան, վերջին Հայ տպարանատէրն ի Կալկաթա, այր զրասէր այլ ինքնահաւան և փառամոլ յոյս:

14. Պարոն Յակոբ Աթ Մկրտիչ Աղազար Աթեանց, թոռն վեհազին Մկրտիչ Աղազար Աթեանց, հայրենասէր իշխանին Նոր-Ջուղայ և մի ի բարեացապարտ նախկին աշակերտացն անմահ ճերթողին Թադեոսեանի «Երկրային Կրթական Գործունէութեան» ի Նոր-Ջուղա» և Հայր զրչիս՝ որ ի հասակի 80 ամաց կնքեաց զմահահանացուն ի 16/28 դեկտեմբերին 1899 ամի:

ՄԵՍՐՈՎԻՍ Յ. ՍԵՐԱՆՏ

ԷՅՅԵԼԻ ԱՇՏԱՐԱԿԻՆ ՍՈՒԳԸ

Դեկտեմբեր 29ին վախճանեցաւ ի Բարիդ 94 տարեկան հասակին մէջ աշխարհահրէշ չափ ճարտարապետ Աղեքսանդր Կիւստուլիֆէլ (Կոնստանտին Տիմիտիև):

Համբաւն սկսաւ առաջին անգամ՝ Պորտոյի մետաղէ կամուրջը շինելով. հետզհետէ շինեց Նիվի, Գարսունգի և Ֆլուարաքի և Հունգարիոյ Յէզէտինի կամուրջները, Սլովակիայի կայարանը, Բարիդ քաղաքին տաղաշարը 1878ի Յուգոսլանդիային, որուն նաեւ գլխաւոր ճակատը: Հուսկ 1889ին կանգնեց իր անուամբ աշտարակը, որ կը ծառայէ այժմ իբր անթել հեռագրի հազորդի զործիք:

Գաղղիոյ մէջ կոչուած էր ինքը «Երկաթեայ Համար»: